Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	**Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում** Հայրենասիրությունը որպես արժեքային համակարգ
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Լուսինե Նահապետյան Անուշավան Պատմության ուսուցչուհի 093080438 nahapetyanlusine96@gmail.com •Հայոց պատմություն (VI-IXդասարաններ) •Համաշխարհային պատմություն (VI-IXդասարաններ) •Հայոց եկեղեցու պատմություն (VI, VII, IXդասարաններ) •Հասարակագիտություն

	(VII-IXդասարաններ) ●Իմ հայրենիք (V դասարան)
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	«ՀՀ Լոռու մարզի Փամբակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնք 098-98-28-58 pambaklori@schoos.am

Պետք է լինի 1-2 էջ

Բովանդակություն

Ներածություն 3

Հիմնական բովանդակություն 4

Եզրակացություններ, առաջարկություններ 5

Օգտագործված գրականության ցանկ 6

Հավելվածներ 7

1 էջ

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և ներկայացնել հիմնական դպրոցի IX դասարանի սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը՝ հայրենասիրությունը որպես արժեք: Տարբեր հնարների ու մեթոդների համադրմամբ ու կիրառմամբ սովորողների մոտ ձևավորել վերաբերմունք, մասնավորապես հայրենասիրությունը որպես արժեք վերլուծելու, կարևորությունը ընդգծելու միջոցով: Այդ նպատակների իրականացումը ենթադրում է կոնկրետ խնդիրների լուծում, որոնք էլ ապահովում են աշխատանքի տրամաբանությունն ու կառուցվացքը: ● Պարզաբանել ազգային արժեքային համակարգի դերը «Պատմություն» առարկայի դասաժամերին: ● Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացն ու յուրացումը: ● Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողությունը, ինքնուրույնությունը, սեփական գիտելիքները ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները: ● Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական նյութի վրա կոնկրետացնելու

	անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմնություններ:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	1.Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն 2. Լեզվական գրագիտություն և կարողունակություն 3.Սովորել սովորելու կարողունակություն Հետազոտվող թեմայի շրջանակներում կիրառվող փոխներգործուն մեթոդները օգնում են զարգացնել սովորել սովորելու կարողությունը, քանի որ ուսումնառության ընթացքում ձևավորվում է քննադատական մտածողություն, ի հայտ են գալիս ստեղծարար ունակություններ, ինչպես նաև սովորողները գնահատում են ինչպես սեփական, այնպես էլ միմյանց ֆիզիկահոգեբանական հնարավորությունները: Փոխներգործուն մեթոդները օգնում են զարգացնել նաև ինքնաճանաչողական կոմպետենցիան, որի միջոցով սովորողների մոտ մեծանում է հարգանքի,ազնվության, պատասխանատվության զգացումը: Փոխներգործուն մեթոդները զարգացնում են նաև մշակութային և

	մեդիա կոմպետենցիաները, երբ դասավանդվող նյութի հետ կապված դիտարկումներ, որոնումներ ու բացահայտումներ են կատարվում: Իհարկե, մեթոդների կիրառումը զարգացնում է նաև այլ կոմպետենցիաները, որոնք բոլորը ուղղված են սովորողի գիտելիքի, կարողությունների, հմտությունների, դիրքորոշման, արժեքների ձևավորմանը :
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	IX դասարան 3 աշակերտ՝ 2 աղջիկ, 1 տղա
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Դիտարկում, հետազոտում, վերլուծություն Որպես հետազոտական մեթոդ ընտրել եմ դիտարկումը: Կիրառվել է ոչ ձևայնացված դիտարկում (որակական դիտարկման ձև է), որի ժամանակ ստեղծվել է համապատասխան իրավիճակ, ուսումնասիրել և կատարել եմ գրառումներ նախապես սահմանված թեմայի շուրջ: Հետազոտության ավարտին կազմակերպեցի ֆրոնտալ

	զրույց-քննարկում, և սովորողներին հնարավորություն ընձեռվեց կարծիք հայտնել ընտրված առաջադրանքների, հանձնարարականների և կատարած աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի մասին: Նրանց կարծիքների և իմ դիտարկումների արդյունքների հիման վրա կատարել եմ համապատասխան հետևություններ և եզրահանգում:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	04.0 9-15. 09

1-2 էջ

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	**Սովերողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում** Դեռևս հին ժամանակներից սկսած՝ ուսուցման գործընթացի կարևորագույն պահանջներից է եղել ապահովել և դաստիարակել կրթված սերունդներ: Եվ պատահական չէ, որ ռուս մանկավարժ և գրող Ա. Ս. Մակարենկոն քննադատում էր երեխային մանկավարժության օբյեկտ համարող մանկավարժներին: Նա մանկավարժական օբյեկտ էր համարում մանկավարժական փաստը (երևույթը), ընդ որում նշում էր, որ երեխան դուրս չի մնում հետազոտողի ուշադրությունից, ընդհակառակը, մանկավարժությունը, լինելով մարդու մասին գիտություններից մեկը, ուսումնահիրում է անձի ձևավորման համար նպատակաուղղած գործունեությունը: Ուստի ճիշտ կրթված յուրաքանչյուր աշակերտի ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները նպաստում են անհատի սեփական հայացքները, համոզմունքները, ստեղծագործական ընդունակությունները, բարոյական ու հոգևոր արժեքները և հասարակական վարքը յուրովի դրսևորելուն: Սովորողի կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք« արժեք հասկացությունը:

	Արժեքը իմաստ է: Այն իմաստավորում է կյանքը: Այն էթիկայի նորմ է: Այն մտածելակերպ է, որից էլ բխում է մեր վարքագիծը: Արժեքները ազդում են մեր որոշումների, նպատակների և վարքագծի վրա: Հետևաբար՝ «Կրթությունն առանց արժեքների կաղ է, իսկ արժեքներն առանց կրթության կույր են»: Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու արժեհամակարգ հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբ է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման ու զարգացման համար:

	Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության արդյունքում գիտելիքները սովորողների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Ժամանակակից մարտահրավերների պայմաններում խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Հայոց պատմություն առարկայի նպատակներից է զինել սովորողներին ազգային արժեհամակարգով: Աչքի առաջ ունենալով ծանր պատերազմի հետևանքները՝ ծանր կորուստները, միևնույն ժամանակ մեր հերոսների կատարած հերոսակն դրվագները, գալիք սերունդը պետք է լավ գիտակցի իր վրա գրված պատասխանատվությունը: Մերօրյա իրականությունը պահանջում է գալիք սերնդին զինել գիտելիքով, հայրենասիրությամբ, սեփական անցիալի պատմական դրվագերի վերլուծության միջոցով անել հետևություններ, պատմական գործիչների, անհատների կյանքի արանձին դրվագների ուսումնասիրության միջոցով ձևավորել պատվախնդրություն, պատասխանատվություն,հաստատակամու թ-յուն, բարեխղճություն, լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ: Հայկական պետականության նետված մարտահրավերները հրատապ են դարձնում

հայրենիքի ապագա պաշտպանների պատրաստման խնդիրը: Այդ գործում մեծ է ազգային հերոսների կերպարների ուսումնասիրությունը: Հայ ժողովրդն իր պատմության ընթացքում հերոսների պակաս չի ունեցել, որոնց շնորհիվ դիմակայել հազարամյակների դաժան փորձություններին: Այդ հերոսների օրինակով մենք կրթում և դաստիարակում ենք մեր սաներին :Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Հանրակիթության պետական չափորոշչով նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

·կարողանա մասնակցել Հայաստանի հիմնախնդիրների քննարկմանը՝ օգտագործելով պատմության, բնության, պետության և տնտեսության մասին ունեցած համապատասխան գիտելիքները: Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են ,սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել

	աշակերտներին ազգային արժեքներով: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ: ● Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակնորի հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: ● Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները: ● Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ: ●Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները: ● Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

	● Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին: ● Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը: ●Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:
Հետազոտության ընթացքը	Հետազոտական աշխատանքի կատարել եմ «ՀՀ Լոռու մարզի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 9-րդ դասարանում Հայոց պատմություն առարկայի «Առաջին հանրապետության հռչակումը» թեման ուսումնասիրելիս: Հետազոտական աշխատանքը կատարվել է հիմնելով առարկայական թեմատիկ պլանավորման վրա: Դասը սկսեցի հետևյալ հարցադրումներով՝ ի՞նչ է հայրենիքը, ինչու՞ և ի՞նչ է անհրաժեշտ հայրենիքում բնակչության բնականոն կյանքի կազմակերպման համար: Սովորողները արտահայտեցին տարբեր կարծիքներ: Անդրադարձ կատարվեց յուրաքանչյուր հնչած կարծիքին: Սովորողները մասնավորապես կարևորեցին սեփական հայրենիքում անկախություն ու անվտանգություն ունենալը:

	Ժամանակագրական կապ անցկացվեց ներկայիս իրավիճակի և Առաջին հանպետության գոյության տարիների հետ, նշվեց մի քանի ընդհանրություններ: Ուսումնասիրեցին և ներկայացրեցին հայրենասիրության մասին մեծերի արտահայտած մտքերը: Կարևորվովեց անհատների դերը հայրենիքի պահպանության գործում: Ներկայացվեց Առաջին հանրապետության կայացման գործում Արամ Մանուկյանի դերը: Հանձնարարեցի մանրամասն ուսումնասիրել նրա կյանքն ու գործունեությունը և նրա դերը Առաջին հանրապետության կայացման ճանապարհին և ներկայացնել սահիկաշարի տեսքով (խմբային աշխատանք): Հաջորդ դասաժամին սովորողները ներկայացրեցին իրենց աշխատանքը: Հանձնարարեցի քառաբաժան վարժություն,որտեղ աշակերտները արտահայտեցին իրենց մտքերը, զգացմունքները: Համեմատելով առաջին օրվա պատասխանների հետ՝ սովորողների մոտ նկատեցի արժեքային համակարգի փոփոխություններ, Արամ Մանուկյանի կյանքի և գործունեության որոշ դրվագներ թողել էին իրենց հետք՝ սովորողների մոտ ձևավորելով ազգային արժեհամակարգ: Հետազոտական դիտարկման վերջում զրույց ունեցա սովորողների հետ և զրույցի ընթացքում եկանք այն համոզման, որ հայրենասիրությունը՝ ոչ միայն երկրի սահմանների պաշտպանությունը այլ նաև վստահված աշխատանքի պատշաճ կատարման պատասխանատվությունն է, և յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է իր աշխատանքով շենացնել ու հզորացնել իր հայրենիքը:

Մոտավոր 10 էջ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Այս հետազոտական աշխատանքում ուսումնասիրվում է այնպիսի թեմա, որը մեծ նշանակություն ունի Հայաստանի ու հայ ժողովրդի համար: Արժեհամակարգի ձևավորման՝ հատկապես հայրենասիրությունը որպես արժեք ձևավորման համար հանրակրթության բնագավառում կարևոր դեր ունի պատմություն առարկան: Արամ Մանուկյանի որպես հասարակական-քաղաքական գործիչի գործունեությունը ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ և պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Կրթության գործում կարևորվում է արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են

	արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարությունը, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա: Հետազոտության ընթացքում հանձնարարված առաջադրանքները նպաստում են նաև սովորողների լեզվական գրագիտության և կարողունակության զարգացմանը, քանի որ երեխաներն աշխատում են տեքստի հետ, և նրանց մշտապես տրվում է հետադարձ կապ՝ շտկվում են բոլոր տեսակի թերությունները: Փոխներգործուն մեթոդների կիրառումը խթանում է սովորողների ակտիվ մասնակցությունը և ինքնուրույն գործունեությունը հմտությունների զարգացմանը, ինչն իր հերթին նպաստում է սոցիալական և ինքնաճանաչողական կարողունակության զարգացմանը:
Այլ տեղեկատվություն	

1-2 էջ

Օգտագործված գրականության ցանկ

1. Անտոն Սեմենովիչ Մակարենկոյի կրթական գաղափարներն ու կենսագրությունը
2. Յուրի Ամիրջանյան, Անատոլի Սահակյան Մանկավարժության ձեռնարկ «(Մանկավարժ 2005)
3. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002
4. Ղուկասյան Ա, Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

6.

1 էջ

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	..\Downloads\Ô±Ö_Õ¡Õ´ Õ„Õ¡Õ¶Õ¸Ö¸Õ¯Õµ Õ¡Õ¶.pdf □□□□ □□□□□□□□□□.p

Ընդգրկված չեն հիմնական էջերի մեջ